ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1

23.09.2022թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/27Հ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք. Երևան **« 13 » « 12 » 2022թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Քարտաշյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 23.09.2022թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/27Հ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը և ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N 1864-Ն որոշումը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1 2022 թվականին իրականացվելիք ծառայությունների գինը նվազեցնել **11 465 905** (տասնմեկ միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար ինը հարյուր հինգ) ՀՀ դրամով, քանի որ 2022 թվականին իրականացվելիք շինարարական աշխատանքների համար նախատեսված ֆինանսական միջոցների մասով կատարվել են նվազեցումներ, և այդ աշխատանքների չկատարված մասը տեղափոխվել է 2023 թվական, ուստի համարժեքորեն նվազեցվել է նաև հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման գումարը՝ **14 988 304** (տասնչորս միլիոն ինը հարյուր ութսունութ հազար երեք հարյուր չորս) ՀՀ դրամի փոխարեն կազմելով **3 522 399** (երեք միլիոն հինգ հարյուր քսաներկու հազար երեք հարյուր իննսունինը) ՀՀ դրամ՝ Պայմանագրի գինը թողնելով անփոփոխ:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2022թ նոր Վճարման ժամանակացույցը համաձայն՝ Հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ, ք.Երևան, Աճառյան 54բ
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011002632	ՀՀ 2050022451291001
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 00813453
գլխավոր քարտուղար	Տնօրեն
Ա. Երիցյան	Դ. Քարտաշյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/27Հ գնման պայմանագրի
«13» «12» 2022թ. կնքված
Թիվ 1 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(ՀՀ դրամ)

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	98111140/60	Հ-75, Մ-9-Իսահակյան-Գյումրի-Մ-7 հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ23+250-կմ37+500 և կմ45+300-կմ60+200 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողություն	---	---	---	---	---	---	---	---	3 522 399	3 522 399	3 522 399	3 522 399	3 522 399

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011002632
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Աճառյան 54բ
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2050022451291001
ՀՎՀՀ 00813453
Տնօրեն
Դ. Քարտաշյան
(ստորագրություն)
Կ.Տ.